14. ՀՆԴՈՒ ՅԱՄԱՆՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱԽՋԻԿՆԵՐ

Կէղնի, չէղնի օսկերիչըմ, ուրին կնիկըմ ու տղէ մը։ Էն մեկ օր օսկերիչ դուքան կբանի, դարվիշըմ կիգա, կասէ.—Օսկերիչ, դու էդա հայով տուն ու տեխ չըս կըռնա կառավարի, էդա տղեն տուր տանիմ, էրթանք սար, օսկի-արծաթ կբերինք, քզիկ լէ կէղնի, ընծի լէ։

Դարվեշն էր առավ զտղեն, գնաց։

Հեր թանբիհ էրից տղին, ասաց.— Լաո, տես դարվեշներուն ամլլաթ չկա, կէղնի օր դուպարա էնէ, թողէ զքզիկ սար մենակ, էրթա, իշքէ՝ արև ինչ դին հ՝ելավ, կբռնես զարև, կէրթաս էն հ՝երկիր, կելնիս դուրս։

Դարվեշ առավ զտղեն ու գնաց։ Կէրթա կելնի բանձր սարու մը գլուխ։

Կասէ.— Տղա՜, հանդէ ես կկարդամ, ինչ խըդար կանչորեք կան, կելնին լեզու, չէղնի քաղիս, որ կանաչ օր ասեց՝ ես օսկի խոտ եմ, արծաթ խոտ եմ, նոր կքաղիս։

Դարվեշ կարդաց ու տղեն հ՝իշավ սարու տակ, կանչորեք հ՝ելան լեզու, էն ասեց՝ իմ անուն ֆըլան է, ֆըլան ցավու դեղ եմ. տղեն անկաճ չէրեց, օր էկավ սըրեն օսկի, արծաթ խոտուն, էս ասեց՝ ես օսկի իմ, էնն ասեց՝ արծաթ, տղեն քաղեց, մեծ խարարըմ լցեց, առավ էկավ դարվեշի խեչ։

Դարվեշն է՝ զօսկի-արծաթն առավ տղից, շալկեց ու հ՝ընկավ ճամբախ, գնաց։ Զտղեն թողեց էդ տեխ։

Մնաց սարու գլուխ. մութ ու գիշեր տվեց վրեն, պառկավ, քնավ։ Քնավ առտըվանց հ՝ելավ, հ՝ելավ նստավ, մտածեց, հ՝ու՞ըվեր էրթամ, հ՝ու՞ըվեր չէրթամ, հոր խոսք հ՝ընկավ միտք, օր ուրեն ասեր էր. «Զավակըս, արև ինչ դիով օր հ՝ելավ, կբռնես քզի ըռեճ զէնդին ու կէրթաս»։

Տղեն առավ ճամբախ հ՝առեջն ու գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, էկավ քոշկ ու սարի մը հ՝ըռաստ։ Գնաց մտավ քոշկ ու սարեն, օլըրտավ, տեսավ, օր մարդ ու մադաթ չկա էդ քոշկի մեջ։ Էկավ հ՝օդե մը նստավ, հար հ՝իրկուն էղավ։ Հ՝իրկուն էղնելուն պես տեսավ, որ բաբո մը մուրուք կէշ-նի չուր ի չոքեր, փըրթավ էկավ։

Հալվորն օր էկավ զէդ տղեն տեսավ, զարմացավ։

Ասեց.— Լաո, հավք ուր թևոք, օձ ուր պորտոք էդա տեխ չի դա, դու իմա՞լ իս էկի, հ՝ընկի էդա տեխ, դու հ՝ու՞ստեն իս։

Տղեն պատմեց զուր գլխու գալած հալվորուն, սալ ու քեֆյաթն հըմ-լա է։

— Ես օսկերչու մը տղա ենք, օրըմ նստուկ ենք կբանենք, դարվեշըմ էկավ, ասեց իմ բաբուն. «Օսկերիչ, դու հըմլա չըս կառնա տուն պահի, էկո զէդա տղեն տուր ընծիկ, առնիմ էրթամ սար, օսկի-արծաթ բերինք, դու լե կի, ես լե ուտիմ»։ Առավ զիս ու էկավ. հ՝եչանք սարու մը գլուխ։ Ընծիկ ասեց. «Տղա, հանդե ես կկարդամ, կանչորեք հըմեն կելնին լեզու, էն կասե՝ ես ֆըլան ցավու դեղ իմ, իմ անուն էդա է, չէղնի ձեռք իտաս, էն խոտն օր ասեց՝ ես օսկու խոտ իմ, արծթի խոտ իմ, ժողվե, լից տոպ-րակ»։ Դարվեշ առավ կարդալ, ես հ՝իշա սարու տակ, տեսա օր կանչորեք հ՝ելան լեզու, խոսացին, գորն օր էկավ օսկի արծաթ խոտուն, էնն ասեց, ես օսկու խոտն իմ, էնն՝ արծթի, ժողվի լցի տոպրակ, առա էկա դար-վեշի խեչ։ Դարվեշ շալկեց զտոպրակ, զիս թողեց սարու գլուխ, մանցի հ՝ոնի, հար լուսցավ, ասի՝ դուրվե՞ էրթամ, դուրվե՞ չէրթամ, հ՝ընկավ իմ հոր խոսք իմ միտք, օր ասեր էր. «Լաո, դարվեշներուն իթիբար չէղնի, կէղնի օր թողե զքզիկ սարու գլուխ, էրթա, հանդե՝ արև ինչ դիով հ՝ելավ, կբռնես կէրթաս»։ Ես լե բռնի, էկա էդա տեխ, հ՝ելա դուրս։

Բաբոն ասեց.— Մատամ օր դու էկեր իս հ՝ոդա, հ՝ելի դուրս, էլ քզիկ չարա չկա դառնաս, էրթաս ետ. ընծիկ ավլատ-թավլատ չկա, էկո, էղի ընծիկ տղա։

Տղեն ասեց.— Թըղ էղնի։

Էղավ Բաբոյին տղա։ Բաբոն ցերեկ կէրթեր աշխատելու, հ՝իրկուն կիգեր։ Վախտըմ օր մանցին, Բաբոն հ՝օդեսներու բալնիկ տվեց տղին։

Հ՝ելավ օլըրտավ, տեսավ օր էրկու-իրեք հ՝օդի դուռ փակուկ էր, զէ-դոնց բալնըկներ չտվեր էր։

Ասեց.—Իմա՞լ հեր է, օր ընծիկ յավլա չէ, զէդա բալնըկներ իտա, բերեր է զդարդակ հ՝օդի բալընկներն է թասլիմ էրի ընծիկ։

Ջնըյաթ կախեց։ Հ՝իրկուն Բաբոն դառցավ, էկավ, տեսավ օր տղի քիթ ու մռութ խառնուկ է հ՝իրար։

Ասեց.— Տղա, հ՝էսօր դու հիվանդ ի՞ս, ի՞նչ իս, զքու նըյաթն էրեր իս։

Տղեն ասեց.—Նը հիվանդ իմ, նը բան է էղի, բան օր էղեր է, ես էղ-

նիմ քզիկ տղա, դու ընծիկ հեր էղնիս, հ՝ելնիս զդարդակ հ՝օդեսներու բալնիկ իտաս հ՝իս, զլիք հ՝օդեսներուն չի տաս, ըպա զիմ մատեն ես չէնիմ, ո՞ր էնե։

Բաբոն ասեց.— Լաո, հալբաթ ես բանըմ գինենք, օր չտվի, իտամ կփոշեմնիս, էլ քու ձեռք չընկնի, էն տեղրանք բան չկա, դարդակ է։

Ինչ էրեց, տղեն լեզու չհասկցավ, հ՝ելավ տվեց զբալնիկներ, թողեց գնաց ուր գործուն։

Բաբոն օր գնաց, տղեն առավ զբալնիկներ ու հ՝ընկավ հ՝օդեք, էդա չէ, էդա է, օլորտավ, էկավ հ՝օդեմ լե բացեց, տեսավ, օր սուրաթըմ կա զարկուկ, էդ հ՝օդի դռան հ՝ետե, մարդ օր տեսնա, հայրան կմնա. տղի ուշք հ՝էսօր չընցեր է, տարի մը հ՝առեջ հ՝ընցեր է, հ՝ընցավ հ՝ընկավ գետին։ Շատ մնաց, քիչ մնաց տղի ուշք հ՝ընցուկ, չըմ գինա, Բաբոն հ՝էն օր շուտ դարձավ, էկավ տուն, դիներ օր տղի վրեն փորձանք մը պիտի հ՝իգեր։

Էկավ.—Տղա, տղա։

Տղա՝ չկա։

Տղեն նը վառեր է, նը էփեր է ու նը թափեր է։

Բաբոն էկավ, տղեն կիսամեռել էր էղի։ Ասեց.— Լաո, բզիկ չասի՞, լախա չունիս, հ՝որի չլսեցիր։

Տղեն ասեց.— Բաբո, չըմ գինա, էդա հ՝իգամ, էդա էրթամ, զէդա սուրբթի տեր ընծիկ կգտնաս։

Բաբոն է, տղից յախա չկառցավ օր ազատեր, էն հ՝օդի մեջ, օր սուրաթ քաշուկ էր, գափանք մը կեր, բերեց բացեց, հ՝իջուց զտղեն մեջ, էդ տեխ մարմար քարուց կապուկ հաուզ մը լե կեր։

Ասեց.— Զէդա հաուզ կտեսնա՞ս, քզիկ հ՝ոդա տեխըմ կփորես, կմրանես մեջ, մարդ չտեսնա զքզի, ուրբաթե ուրբաթ կեսօրվան իրեք հատ էղբվնեկ կիգան, կհանին զուրանց էղբվնեկե հալվներ, կէղնին հուրնիկ-հրեղեն ու կընկնին ջուր։ Օր կընկնին ջուր, դու վազե մեկի էղբվնիկվենին վերու, հանդե էնդոնց ըռանկն է՝ սև, կարմիր ու սպիտակ. սև ու կարմիրն չվերուս, սպիտակ կվերուս, էդ սուրաթի տեր սպիտակն է։

Մարգրտե շապիկըմ լե տվեց տղին, ասեց.— Հընտե, էնի կմնա տկլոզ, կուզե զուր էղբվնիկվենին հագնի, դու տար զէդա շապիկ, տուր ուրեն՝ թըղ հագնի, բըլե խոսք առնիս հ՝ուրնե, սորա տանիս, իտաս, ջապիկ հագնի։

Տղեն Բաբոյի ասածի պես էրեց, բերեց հաուզի կուշտ հորըմ փորեց գետնի տկեն ու ծակըմ թողեց, մտավ մեջ։

Ուրբաթ կեսօր էղավ, տեսավ օր իրեք էղբվնիկ փանջարից մտաններս, հանեցին զուրանց էղբվնիկվենին, դրին հաուզի կուշտ ու մտան շուտ կլողկընեն, տղեն թալեց սպիտակ էղբվնիկվենին վե-

ռուց, պահեց, ախչրկներն է, որ լողկրցան հ՝ելան, զուրանց հալավ կհազնեն, էրկու քուր հ՝ելան, էն մեկ մնաց մըշ շրին, պոռաց ասաց իրեք հեղ. «Ո՞րն է զիմ էղրվնիկվենին տարեր է, թըղ իտա, ես խոսք կիտամ»։

Երկու քուր հագած են, նստած վըր քարերուն, ախչիկն է, որ խոսք տվեց, բերեց տղեն շուտմաշուտ ղմարգրտե շապիկ, էձգեց ախչկա վիզ, բուրվըդիք որ տեսան, ասին.—Դել, խանճուխ, դու էդնիս Հնդստանա թագավորի ախչիկ, հ՝իգաս խոսք իտաս հողածնի՞ն, դու կանի, զքու քիթ ու մռութ կկտրինք,—գրֆ տվին ու թռան գացին։

Տղեն առավ զախչիկ, հ՝ելավ էկավ վի, գրկվան իրար ու պառկան, զուրանց քեֆ հասըլցուցին։

Բաբոն հ՝իրկուն որ էկավ, տեսավ որ տղեն զուր հ՝ուզած բերեր էր, էրեց ուրեն հարս։

Ժամ ու ժամանակըմ մանցին, սատանեն մեկ լե մտավ տղի հ՝անթե տակ, կարած կութ, ըռհաթ ապրել զաչք կհաներ։ Միտք հ՝ընկավ ուր անոթի հեր, ասեց.— Ես կէրթամ իմ հ՝երկիր։

Բաբոն ասեց.— Լաո, մ՝էրթա, կփոշմընիս, էդի Հնդու Յամանու թագավորի ախչիկն է, որն որ տեսնա, զքու գլուխ կիտա զարկել, քու ձեռքեն կառնե, ըշթա քզի կտորըմ հաց կա, կի ու նստի հ՝ոնա, հ՝որի՞ կէրթաս։

Ինչ էրեց, լեզու չհասկցավ, տղեն բռնեց զփեսի չոր գլուխ ու մնաց։ Ճար կտրավ, հ՝ելավ էրկու արծիվ կանչեց։

Ասեց.— Մեկդ կդնե զկնիկ, մեկ լե զիրիկ ուր թիվերու վրեն, կհանեք ֆըլան տեխ, դնեք ու հ՝իգաք։

Բերեց դմակըմ ու փառշըմ գինի տվեց տղի մոտ, դմակըմ ու փառշըմ գինի լե ախչկա մոտ։

Ասեց.— Ինչքան որ արծըվներ կանոթնան, դմակըմ կիտաք ու զգինին լե հ՝ետևեն, զձզիկ կհանին ձըր հ՝երկիր։

Արծիվներ առան ուրանց թիվերու վրա ու հ՝ելան հ՝ընկան ճամբախ։

Շատ գացին, քիչ գացին, ախչկա դմակ խըլըսավ, մեկ հեղ էր տվի, արծիվ հ՝ուզից դմակ, ախչիկ թալեց զչախուն ուր թութկեն կտորըմ միս կտրեց, տվեց։ Արծիվ որ առավ բերան, տեսավ շոռ էր, գիցավ իանի միս էր, պահեց ուր լեզվի տակ, չկերավ։

Էկան, էկան, քաղքի մը մոտ հ՝իշան, արծըվներ դրին վըր ճամբու մը ու դարձան, կէրթեն։ Տեսան, որ ախչիկ չկառնա քելե, արծիվ հանեց զմիս լեզվի տըկեն, տվեց ախչկան, ասեց.— Ախչի, առ զէդա զարկ քու յարի վրեն, կսաղնա։

Ախչիկ առավ զարկեց, էնդոնք դարձան գացին ուրանց ճամբու հետ, տղեն առավ զուր կնիկն, էկավ քաղքի մեջ։ Էկավ որ պիտի մտներ քա-

՝ղաք, էդ քաղքի բազրկան բաշու ձեռք հ՝ընկեր էր Հնդստանա թագավո-
րի ախչկա պատվերք, կախեր էր պատեն ու կէրթեր, կիգեր, կիշքեր
վրեն, կհալեր ու կմաշվեր, ձեռք չըր հ՝ընկներ։

Բազրկան բաշին հ՝ըռաստ էկավ, աչք առավ ախչիկն, խելք գլխեն
գնաց, ասաց. «Յա՜, էդա իմ փնտրած ախչիկն է, ես գիշերով կփնտրենք,
ցերեկով հ՝ընկավ իմ ձեռք, իմա՞լ էնիմ, զէդի էդ տղի ձեռքեն առնիմ»։

Ասեց.— Տղա, դու հ՝ուստ ի՞ս։

Տղեն ասեց.— Ես խարիբ իմ։

Ասաց.— Չի գա՞ս հ՝էսօր մըր տուն մըսաֆըր։

Տղեն է՝ միամիտ-միամիտ ասեց.— Հ՝ո՞րի չըմ հ՝իգա։

Առավ զուր կնիկ ու հ՝ընկավ բազրկան բաշու հ՝ետև գնաց։ Գացին
հ՝օդեն, օր մտան, ախչիկ վերուց զգլուխ վի, տեսավ զուր սուրաթ։
Ասեց՝ հե՜յ վախ, իմալ մինք հ՝ընկանք հ՝ոդա։

Իրկան ասեց.—Դու իմա՞լ էկար հ՝ոդա, էղար մըսաֆըր, տեխ
կտրե՞ր էր քու արևու վրեն, կանի տես դու իմա՞լ փոշեմնիս։

Իրիկն ասեց.— Հ՝ո՞րի պիտի փոշեմնիմ, խարիբ ինք, տեխ չկեր,
էդա մարդ թաքլիֆ էրեց, մինք լե էկանք։

Օր տղեն ասեց՝ հ՝որի կփոշեմնիմ, ախչիկն ասեց.—Վերու զգլու-
խըդ վի։

Վերցուց տեսավ, հա՜յ հո, էդա էն սուրաթն է, օր կախուկ էր բա-
բոյի հ՝օդից. քիչըմ տրտմավ, սորա դարձավ կնկան սիրտ տվեց։

Ասեց.— Ջանըմ, շատ կվախենաս, բազրկան բաշու քյամալն ի՞նչ
է, օր էդա սուրըթով զբզիկ առնե հ՝իսնե։

Ախչիկն ասեց.— Կտեսնանք։

Տվեց քառսուն փարա իրկան, ասեց.— Դու գնա շուկից ընծիկ
քառսուն փարի աղու բի, ես գինամ զիմ էնելիք։

Տղեն առավ զքառսուն փարեն, գնաց շուկեն, առավ քառսուն փարի
աղու, էկավ, բերեց տվեց կնկան։

Օրըմ մանցին, օլոր օր հ՝ելան կէրթեն, բազրկան բռնեց ղտղի յա-
խեն.— Դո՞ր կտանես զէդի, էդի իմն է։

Տղեն ասեց.—Ջանըմ մ՝էլի, մ՝ըլի, էդի իմ կնիկն է, ես գացեր իմ
ֆըլան տեխեն բերի։

Ջարա չէղավ, հ՝ելավ բազրկան գնաց վըր տղին գանգատ։

Գնաց գանգատ, ասեց.— Տեսեք, էդա իմ տղեն է, ճամփի օր էրթեր
զուր մեր առներ հոր տնեն, հ՝իգեր, մըկա առեր է, էկեր է, կաներ է վըր
օտաց, կասե՝ էդի իմ կնիկն է, քու կնիկ չէ։ Մեր իսկի զտղեն կառնե՞,
զէդ դատաստան դուք էրեք։

Էկան գանգտվորներ, քոման վ'իրարու, ասին՝ էդ բազրկնին տղա չկա, իլավա կենե։

Տղից հարցուցին, տղեն ասեց.— Իմ կնիկն է։

Ու տղի խոսք չմբխ բռնեց, քանի օր էնդոր շահագներ, շահադութին տվին, թե էդոր տղա չկա։

Դարձավ էկավ տուն, կնկան թարիֆ էրեց, ասեց.— Գացինք գանդատ, բազրկան ասեց. «Էդա իմ տղեն է, ճամբի ուր մամու հ'ետևեն, բերեր, բերեր է, հըմկա կասե իմ կնիկն է, մեր իսկի զտղեն կա՞ռնեմ։ Շահադ հ'ուզին, ցուցուց, կանչին բերին շահագներ ասին՝ սուտ կասե, էդոր տղա չկա։ Սորա հ'իսնե հարցուցին, ասի. «Իմ կնիկն է»։ Հախ տվին։ ընծի, թողինք էկանք։

Կնիկն ասեց.— Բազրկնի հետ պետք է յոլա էրթանք, օձ անուշութենով ծրկեն կհանեն, օր յոլա չէրթանք, կիգա ճամբու հետ, կվնասե պմի, մըր թարկ չիտա, դու թող ընծի։

Էն աղուն օր բերեր էր, ախչիկ պիտի իտեր բազրկնին խմեր, նըստան վըր հացին, գինի խմելու ատեն լըցեց զաղուն ըստաքնի մեջ, տվեց բազրկնին։

Բազրկան խմեց, շրջավ գետին։

Բազրկան օր փիցավ, տղեն ասեց.— Ախըր բազրկան գնաց, ուրեն լե ավլատ-թավլատ չկա, էդա հարստութեն հ'որի՞ մնա տեխ, էկո հոկցած չէրթանք, նստինք, քանի սաղ ինք, ուտինք ու վայելինք։

Կնիկն ասեց.— Լախա չունիս, հարստութեն ուտե զտերու գլուխ, էդա տեխ մնաք, օրըմ լե ուրիշ կէլնի ընձի տեր, դու չըս կառնա ազատի, ախըր օր Բաբոյին անկաճ չերիր ու առար էկար, հ'ելնենք, էրթանք։

Հ'ըմեն բան հազըր էր բազրկնին, հ'ելան բարցան զբազրկնի հարըստութենն ու հ'ընկան ճամբախ։

Էկան, շատ էկան, քիչ էկան, էկան խոնախանե մը հ'իշան։ Հ'իշան խոնախանեն, էդ հաղ լե քոռախադի թագավորի տղեն էկավ էնդիեն։

Կնիկն օր տեսավ թագավորի տղեն, խելք գնաց, ասեց.— Հըմլա խորոտիկ լե կէղնի՞ աշխարքի մեջ։

Խելք օր էկավ գլուխ, ասեց. «Ես էղնիմ թագավորի մը՝ տղա ու էդա կյադեն զէդա կնիկ առնե, էրթա, էլ հ'որի՞ սաղ կմնամ։ Իմալ էնիմ, էդոր ետար գտնամ ու իմ հեր չլսե, զէդա տղեն իտամ կախել ու զկնիկ առնիմ ձեռքենն։

Մտածեց, ճար հըմլա կէղնի, դառցավ էկավ ուր տեխ նստավ, էրկու մշակ ճամբեց, ասեց.— Գացեք ֆըլան տեխ տղեմ կա, առեք ու էկեք։

Առանց գանգտվորի, առանց մեղքի, առան զտղեն գացին օր կախեն։

Տղեն տարան, օր կկախեն, կնիկն ասեց.— Իմալ կէղնի, զէդա տղեն մեկ լե ազատինք, հ'ընկեր-ինք խարիբ տեխ ու մարդ չընք ճանչնա։

Հ'ելավ տղէ մը գտավ, քանի մը փարա տվեց ձեռք ու թուղթըմ գրեց թագավորին. «Դու իմա՞լ թագավոր իս, օր որն օր հ'իգա էղա հ'երկրեն հ'ընցնի, առանց գանգատվորի կրանին, տանին, կախին։ Ես Հնգու Ցամանու թագավորի ախչիկն իմ, էկա իմ մարդու հետ օր կընցնենք էրթենք, քու տղեն տեսավ զիս, ճամբեց զիմ իրիկ տարավ, օր կախե, առնե զիս։ Օր գինամ զիմ իրիկ պիտի կախե, ջուհար կէնիմ իմ հոր, ուր ասքյարասքրով հ'իգա քու վրեն կռիվ, քու տղեն կտրիճ է, թըղ ելնի կանի իմ հոր ասքրի հ'առեջ, նոր գինամ կտրիճ է»։

Տվեց զթուղթ, առավ տղեն գնաց, տվեց թագավորի ձեռք, կարդաց, կանչեց զուր վազիր, ասաց.— Գնա, տես օղո՞րդ է, օր բերեր է զէդ կնկա իրիկ, կկախե, ի՞նչ է ուր հանցանք օր կկախե։

Վազիր գնաց, տեսավ օր օղորդ է, էկավ թագավորին ասեց.— Օղորդ է, բելա սապապ բերեր է զմարդու իրիկ կկախե։

Թագավոր ճամբեց զտղեն առավ, էկավ, ասեց.— Ի՞նչ հանցանք է էրի էդ մարդ, օր առանց հարց ու փորձ էնելու բերեր իս, կկախիս։

Տղեն ասեց.—Էնի էղնի կյադի մը կտոր, էնոր կնիկ զիմ խորոտիկ էղնի ու բերե իմ հ'առջևեն հ'ընցու տանե, ըպա չըմ կախի՞։

Հերն ասեց.— Հախ չունիս։

Խանտըրմիշ էրեց, առավ զիրիկ, թասլիմ էրեց կնկան, ասեց.—Դը էլեք էդա հ'երկրեն քաշվեք, քանի տարին տղայե։

Առան զիրար ու էկան։

Էկան, էկան ուրանց տուն իշան։

Շատ մնաց, քիչ մնաց, թագավորի տղին էղեր էր դարդ, հ'ելավ հագավ ձեռքըմ դարվեշի հալավ ու հ'ընկավ կնկա հ'ետևեն։

Ասաց.— Ալավակի, ես իմ հոր անկաճ պիտի չէնիմ, պիտի էրթամ հասնիմ էդ մարդուն, սպանիմ, առնիմ զկնիկն ու հ'իգամ։

Տղեն հ'էկավ, մեկ լե զուր հոր հաց գտավ, էդոնք թըղ մնան հ'ոդի, մենք դառնանք թագավորի տղի վրեն։

Թագավորի տղեն մտավ դարվեշի խըլըղ ու հ'ընկավ ճամբախ։ Շատ էկավ, քիչ էկավ, էկավ զտղեն գտավ։ Տղեն լե գացեր էր նստի հոր դուքան, զուր օսկերչութեն կեներ։

Էկավ դուքան, չէ տղեն հեղըմ զդարվեշի ջուր խմեր է, չխաբվի։

Ասեց.— Տղա, դու օսկերիչ իս, ընծիկ օսկի ու արծաթ շատ կա, էկո էղնինք հ'ընկեր, շինինք բըլազուկ, գագաթ, ապրջան ու մատնիք, ծախինք։

Տղեն ասեց.— Քու օսկի ու արծաթն քզիկ թըղ էղնի, ընծի օսկի ու արծաթ շատ կա, իմ հեր հըմալ օսյաթ-ամանաթ չերեր է ընծի։

Դարվեշ ասեց.— Հըմլա չէղնի, տղի հետ գլուխ չելնի, ես պիտի էրթամ թղեր օլըրդիմ, բալքիմ գտնամ զդարվեշի տուն, զկնիկ տեսնամ։

Դարվեշն է, հ՚ելավ գուֆըմ առավ ձեռք, հարցուց զօսկերչու տուն, էկավ գտավ ու նստավ դուռ։ Առավ զդուֆ ձեռք՝ զարկեց ու իշքեց փանջարի դին։ Կնկա ճար կտրավ, իշքեց փանջարից, տեսավ օր դարվեշ տնկեր է զքիթ ու զինք կիշքե, ճանչցավ, օր էդի թագավորի տղեն է։

Զարկեց, զարկեց, հանեց զբաշխիշ տվեց, թողեց գնաց։ Օր թողեց գնաց, ասեց.— Էդոր յոլեմ պետք է հանել, թը չէ՝ չէղնի։

Հնդստանա թագավորի ախչիկն օր տղեն բերեր էր, դրեր էր յոթ հ՚օդով ներս։

Հ՚իրկուն, դառցավ էկավ ուր տուն։

Կնիկն հարցուց, ասեց.— Մարդ, հ՚էսօր քու դուքան մարդ էկե՞ր է։

Տղենն ասեց.— Չէ, մարդ չէկեր է, մինակ դարվեշըմ էկավ, ասեց. «Ընծի օսկի ու արծաթ շատ կա, էկո էղնինք օրթախ, շինինք մատնիք, բըլաղուկ, ծախինք»։ Ես ասի՝ հեղըմ դարվեշներուց խրատվեր իմ, իմ հեր օսյաթ էրեր է, օր մարդու հետ հ՚ընկեր չէղնիմ, ընծի օսկի ու արծաթ շատ կա. թողեց գնաց։

Ըստհաղ կնիկ վերցուց, ասեց.— Հ՚էսօր դարվեշըմ լե մըր փանջարի տակ էկավ, զարկեց, ես անկաճ չէրի, ճարս կտրավ հանի տվի զուր բաշխիշ, օր էրթեր, տեսա օր պըշխլեր է զիս կիշքե, ֆքրա օր թագավորի տղեն է։

Ասեց.— Իմալ էնինք օր էդա դիր լե ազատվինք։

Կնիկն ասեց.—Կիշնիս, բաղչի դռան հ՚առեշ հորըմ կբանաս, իշալլահ զբազրկնի աղուպեն կբերիմ ուր վրեն։

Տղեն հ՚իջավ ու բաղչի դռան հ՚առջև յոթ գազկան հորըմ փորեց։

Դարվեշ օլոր օր կես ավուր մեկ լե էկավ, օր դուֆ զարկեր, կնիկ նստեր էր փանջարեն կիշքեր։

Ասեց.— Ասեք թըղ հ՚իգա վի։

Զհորու բերան աղեկըմ բռներ էր խըսըլով, զդուս օր բացին, դարվեշ ներս պիտի մտներ, օտք թալելու պես, չըրո՞մփ, գնաց հորու մեջ։

Դարվեշն օր հ՚ընկավ հորու մեջ, ախչիկն հ՚իջավ էկավ ցած, էկավ հորու վրեն գճավ իշքեց։

Ասեց.— Թագավորի տղա, դու ջահել ջըմլիկ էր. ես ասի քզի զէդա բան մ՚էնի, դու անկաճ չէրիր, տարար զիմ իրիկն օր կախեր, տեսար աստված իմալ բերեց քու հ՚առեջ։ Էկո, խոսք տուր, հեղըմ լե ուրիշ կնկա հ՚ետևեն չընկնիս, զքզիկ ազատիմ, գնա հասի քու կնիկ-ճժուն, թե չէ՞ չըմ ազատի։

Իրեք անգամ ասաց, իրեք հեղ լե թագավորի տղեն ասեց. «Քանի սաղ իմ, զքու թարկ չպիտի իտամ, կուզիս հանե, կուզիս մը հանիս»։

Կնիկն ասաց.— Օր զիմ Թարկ չը պիտի իտաս, դու լե տես ու զհող տվեց վրեն, լիք լրցեց։

Ասեց.— Դը գնա, զիմ Թարկ մի տա։

Նոր փըրցավ, ազատավ կնկա յախեն ու օսկերչու տղին ու նստան ձիրար վայելեցին։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ չե՝ անկաճ էնողին։